

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ Մարտի 28-ին, Ավագ Հինգշաբթի օրը, առավոտյան Վիրահայոց Թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ

1 / 5



Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհի Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ:

HAYARTUN

Պատարագիչն էր Տեր Մանուկ քահանա Զեյնալյանը: Այնուհետև Թբիլիսիի «Սուրբ էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Սամվել

2 / 5

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ

քահանա Թորոսյանը հավատացյալներին քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին: Երեկոյան ժամերգությունից հետո Եկեղեցում կատարվեց Ոտնլվայի արարողություն: Քրիստոս վերջին ընթրիքից հետո, ցուցաբերելով ճշմարիտ հեզության ու խոնարհության օրինակ, լվանում է իր աշակերտների ոտքերը: Վիրահայոց Թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը Հայ Եկեղեցում Տիրոջ այս

3 / 5

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ

օրինակով, շարականների երգեցողության ներքո, եկեղեցու խորանին ծնկաչոք լվաց տասներկու մանուկների ոտքերը և օծեց օրինված յուղով: Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվեց Խավարման կարգ, որը վերաբերում է Ավագ Ուրբաթին՝ խորհրդանշելով Տիրոջ խաչելությունն ու թաղումը: Վիրահայոց Թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանի գլխավորությամբ կատարվող Արարողության ընթացքում ավետարանական

4 / 5

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ

ընթերցումները հիշեցրեցին Հիսուսի աղոթքը Գեթսեմանի պարտեզում, Հիսուսի մատնությունը, Նրա անարգվելը, Պետրոսի ուրանալը: Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի եկեղեցիներում Ավագ Հինգշաբթի օրը մատուցվեց Սբ. Պատարագ և կատարվեց Ոտնլվայի և խավարման կարգ:

5 / 5